# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԴՍԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝ dsegh.lori@mta.gov.am

N 0279-02/34
«17» փետրվարի 2017թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Դսեղ համայնքի ղեկավարի 2017թ. թիվ 07-Ա, 08-Ա որոշումները և աշխատակազմի քարտուղարի թիվ 06 հրամանը:

Առդիր 3 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

### ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2017 թվականի N 07-Ա

### ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Դսեղ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել Մշակույթի տան շենքը (հասցեն Հրապարակ 5):

2. Սույն որոշման մասին տեղեկացնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2017թ. փետրվարի 09-ին
գ. Դսեղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2017 թվականի N 08-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղը`

   1. նախկին գյուղկոոպի շենք, հասցեն` 3 փողոց, շենք 2
   2. նախկին հանրախանութի շենք, հասցեն` Հրապարակ 3:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2017թ. փետրվարի 09-ին
գ. Դսեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.lori@mta.gov.am

# ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 06

«09» փետրվարի 2017 թվականի

## ԱՐՄԻՆԵ ԱՐԱՄԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Համայնքային ծառայության մասին» 32-րդ հոդվածի 1-ին կետի, բ ենթակետով

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, գրադարանային ֆոնդի պահպանումը և օգտագործումը չապահովելու ու չկազմակերպելու համար՝ համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Արմինե Արամի Ամիրխանյանին հայտարարել նկատողություն:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ՉԱՏԻՆՅԱՆ

2017թ. փետրվարի 09-ին
Գ. Դսեղ